

Ե.Վ. ՍԵՏՐՕՅԱՆ, Տ.Գ. ՏԱՐՅԱՆ, Մ.Ա. ԱԶԻՅԱՆ
ПРОБЛЕМЫ СОТРУДНИЧЕСТВА И СИСТЕМНЫЕ ВЫЗОВЫ В
ГРУЗОПЕРЕВОЗОЧНОЙ ОТРАСЛИ США

Грузоперевозочная отрасль США является важной частью национальной экономики, отвечающей за транспортировку большинства товаров по всей стране. Однако этот сектор сталкивается с рядом вызовов, как кооперативных (включающих взаимодействие между различными заинтересованными сторонами), так и системных (из-за структурных или операционных неэффективностей). Для решения этих проблем требуется многогранный подход, включая более значительные инвестиции в инфраструктуру, улучшение подготовки и удержания водителей, широкое внедрение технологий и реформу регулирования. Эти вызовы влияют на эффективность, безопасность и устойчивость.

Ключевые слова: системные вызовы в грузоперевозочной отрасли США, анализ вызовов, кооперативные вызовы, решения, грузоперевозочная отрасль, системные факторы.

ՀՏԴ 658.14.011.1: 336.67

L.U. ՍԱՐԳՍՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՍՎԵՏ-ՏԵՔՍ» ՍՊԸ ՕՐԻՆԱԿՈՎ
(Գյումրի)

Ներդրումային գրավչությունն ինչպես կազմակերպության, այնպես էլ, ընդհանուր առմամբ, երկրի տնտեսության առավել կարևոր ասպեկտներից է: Կատարված հետազոտության արդյունքներով կարելի է եզրակացնել, որ ձեռնարկության ներդրումային գրավչության առանցքային օղակը նրա ֆինանսական դրությունը և ֆինանսական կայությունն են, նաև դրա դրանց գնահատման առավել հաճախակի օգտագործվող մեթոդը՝ ֆինանսական ցուցանիշների հաշվարկումը:

Առանցքային բաներ. ֆինանսական գրավչություն, ֆինանսական կայությունություն, իրացվելիություն, վճարունակություն, ֆինանսական կախվածություն, ֆինանսական ինքնուրույնություն, ֆինանսական լծակ:

Ձեռնարկության ֆինանսական դրության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել նրա ընթացիկ գրավչությունը, քանի որ ֆինանսները արտադրանքի թողարկման և իրացման գործընթացում ներառում են դրամական եկամուտների առաջացումը և օգտագործումը, վերարտադրողական գործընթացում շրջանառության ապահովումը, հարաբերությունների կազմակերպումը այլ ձեռնարկությունների, բյուջեի, բանկերի, ապահովագրական ընկերությունների հետ, ինչպես նաև ձեռնարկության մրցունակությունը և ներուժը [1]:

Վերլուծության նպատակը ձեռնարկության ֆինանսական դրության հիման վրա ֆինանսական ռազմավարության մշակումն ու զարգացումն են:

Առավել հաճախ որպես ֆինանսական կայունության չափանիշներ օգտագործվում են ձեռնարկության ֆինանսական վիճակը (իրացվելիություն, վճարունակություն, ֆինանսական կայունություն, գործարար ակտիվությունը, գործունեության արդյունավետությունը (ակտիվների շրջանառություն, արտադրանքի ու արտադրության շահութաբերություն) բնութագրող ցուցանիշները [2]:

Ծածկման գործակիցը (Q_{δ}) հավասար է բոլոր շրջանառու միջոցների (հանած ապագա ժամանակաշրջանի ծախսերը) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցությանը, ցույց է տալիս ձեռնարկության՝ կարճաժամկետ պարտավորությունների կատարման կարողությունը՝

$$Q_{\delta} = \frac{\text{Շրջանառու ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}}:$$

Ստորև որոշվել է, թե 3 տարիների ընթացքում, որ տարում է ավելի գրավիչ եղել ծածկման գործակիցը:

2020 թ.-ին ծածկման գործակիցը կազմել է՝

$$Q_{\delta} = \frac{216644}{92632} = 2,3,$$

2021 թ.-ին՝

$$Q_{\delta} = \frac{295374000}{109178000} = 2,7,$$

2022 թ.-ին՝

$$Q_{\delta} = \frac{502818000}{160810000} = 3,12:$$

Ծածկման գործակցի նորմալ սահմանափակումների մեծությունը պետք է մեծ լինի 2.0-4.0 միջակայքից, որից ցածր այն թույլատրելի չէ: «Սվետ-Տեքս» ՍՊԸ-ի տվյալներով 3 տարիների ընթացքում ծածկման գործակիցը գրավիչ է եղել, սակայն, եթե համեմատենք, ներդրողի համար ավելի վստահելի է 2022 թ.-ի ցուցանիշը:

Ֆինանսական գրավչության որոշման կարևոր ցուցանիշներից է արագ իրացվելիության գործակիցը ($Q_{w.p.}$), որը ցույց է տալիս բարձր իրացվելիության ակտիվների հաշվին ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունների ձեռնարկության կատարման կարողությունը՝

$$Q_{w.p.} = \frac{\text{Դեբիտորական պարտք} + \text{Դրամական միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}}:$$

2020 թ.-ին արագ իրացվելիության գործակիցը կազմել է՝

$$Q_{w.h.} = \frac{50280 + 25451}{92632} = 0,82,$$

2021 թ.-ին՝

$$Q_{w.h.} = \frac{52890 + 35250}{109178} = 0,80,$$

2022 թ.-ին՝

$$Q_{w.h.} = \frac{85500 + 65250}{160810} = 0,9:$$

Այս ցուցանիշի նորմալ սահմանափակումների մեծությունը պետք է մեծ լինի 0. 8-ից կամ 1-ից, որոնցից ցածր չպետք է լինի: «Սվետ-Տեքս» ՍՊԸ-ի տվյալներով 2022 թ.-ին արագ իրացվելիության ցուցանիշը առավել նախընտրելին է համարվել, քանի որ ներդրողը կարևորություն է տալիս այն փաստին, թե ձեռնարկությունը ընթացիկ պարտավորությունները կատարելու համար որքանով է ճիշտ օգտագործում բարձր իրացվելիության ակտիվները [3]:

Բացարձակ իրացվելիության գործակիցը ($Q_{p.h.}$) ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների այն մասը, որը շատ արագ մարվել է բացառապես իրացվելի ակտիվների հաշվին՝

$$Q_{p.h.} = \frac{\text{Դրամական միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}}:$$

Բացարձակ իրացվելիության գործակիցը 3 տարիներին եղել է.

2020 թ.-ին բացարձակ իրացվելիության գործակիցը ստացվել է՝

$$Q_{p.h.} = \frac{25451}{92632} = 0,27,$$

2021 թ.-ին ավելի ցանկալի ցուցանիշ է ստացվել՝

$$Q_{p.h.} = \frac{35250}{109078} = 0,32,$$

2022 թ.-ին գրանցվել է առավել նախընտրելի ցուցանիշը՝

$$Q_{p.h.} = \frac{65250}{160810} = 0,4:$$

Բացարձակ իրացվելիության գործակիցի նորմալ սահմանափակումների մեծությունը պետք է մեծ լինի 0. 2-ից: «Սվետ-Տեքս» ձեռնարկությունը 2022 թ.-ին ունեցել է ցածր ֆինանսական ռիսկ և, հետևաբար, արտահայտում է արտաքին

լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման բարձր պոտենցիալ հնարավորություններ:

Գործակցի ցածր լինելը կարող է բացատրվել նաև նրանով, որ ձեռնարկությունն իր դրամական միջոցները ձգտում է ներդնել արտադրության մեջ՝ ի վնաս կարճաժամկետ պարտավորությունների կատարմանը, ուստի ներդրողը ձգտում է ներդրում կատարել այն ձեռնարկությունում, որտեղ բացարձակ իրացվելիության գործակիցը ավելի փոքր է:

Վճարունակության գործակիցը ($Q_{վ.մ.}$) ցույց է տալիս, թե ինչքանով է ձեռնարկության գույքի արժեքը ծածկում նրա կարճաժամկետ պարտավորությունները [3].

$$Q_{վ.մ.} = \frac{\text{Ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}}$$

2020 թ.-ին ակտիվները կազմել են 500000, իսկ կարճաժամկետ պարտավորությունները՝ 92632, վճարունակության գործակիցը կազմել է՝

$$Q_{վ.մ.} = \frac{500000}{92632} = 5,4:$$

2021 թ.-ին ակտիվները կազմել են 784000, իսկ կարճաժամկետ պարտավորությունները՝ 109178, վճարունակության գործակիցը կազմել է՝

$$Q_{վ.մ.} = \frac{784000}{109178} = 7,2:$$

2022 թ.-ին ակտիվները կազմել են 1039191, կարճաժամկետ պարտավորությունները՝ 160810, իսկ արագ իրացվելիության գործակիցը կազմել է՝

$$Q_{վ.մ.} = \frac{1256500}{160810} = 7,8:$$

Վճարունակության գործակիցը բնութագրվում է սահմանված ժամկետում կազմակերպության վճարային պարտավորությունները կատարելու հնարավորությամբ: Այսպիսով, որ տարում որ ավելի մեծ է վճարունակության ցուցանիշը, այնքան նախընտրելի է ներդրողի կողմից այդ տարում ներդրում կատարելը: Այս դեպքում ներդրողի համար ավելի շահութաբեր կլինի 2022 թ.-ին ներդրում կատարելը:

Ֆինանսական կայունության ցուցանիշների միջոցով արտահայտվում է անխափան արտադրական գործընթացը և ֆինանսների արդյունավետ օգտագործումն ապահովող ձեռնարկության ֆինանսական ռեսուրսների վիճակը:

Ինքնուրույնության գործակիցը ($Q_{ի.ս.}$) արտահայտվում է ձեռնարկության սեփական կապիտալի և ակտիվների ընդհանուր գումարի հարաբերակցության միջոցով՝

$$Q_{ի.ս.} = \frac{\text{Կապիտալ և պահուստներ}}{\text{Ակտիվների ընդհանուր գումար}}:$$

Որոշելով ինքնուրույնության գործակիցները 2020-2022 թ.թ.-ների տվյալներով, կստանանք հետևյալ արժեքները.

2020 թ.-ին իրացվելիության ցուցանիշը ստացվել է՝

$$Q_{ի.ս.} = \frac{756500}{600500} = 1,2,$$

2021 թ.-ին՝

$$Q_{ի.ս.} = \frac{651092}{500840} = 1,3,$$

2022 թ.-ին՝

$$Q_{ի.ս.} = \frac{1655600}{1117840} = 1,4:$$

Ինքնուրույնության գործակիցը բնութագրում է միջոցների անկախությունը փոխառու աղբյուրներից: Այս ցուցանիշը պետք է լինի 1-ից մեծ, և ներդրողների կողմից ավելի նախընտրելի է 2022 թ.-ին ստացված ցուցանիշը, քանի որ ինքնավարության գործակցի աճը վկայում է ապագայում ֆինանսական դժվարությունների ռիսկի իջեցման, ֆինանսական անկախության աճի մասին, որն էլ մեծացնում է ձեռնարկության սեփական պարտավորությունների մարման երաշխիքը:

Ֆինանսական կախվածության գործակիցը ($Q_{ֆ.կ.}$) ցույց է տալիս փոխառու կապիտալի մասնաբաժինը ֆինանսավորման աղբյուրներում և բնութագրում է ձեռնարկության կախվածությունը վարկատուներից [4]՝

$$Q_{ֆ.կ.} = \frac{\text{Կարճաժամկետ + երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Ակտիվների ընդհանուր գումար}}:$$

2020 թ.-ին ֆինանսական կախվածության գործակիցը ստացվել է՝

$$Q_{ֆ.կ.} = \frac{92632 + 564000}{600500} = 1,09,$$

2021 թ.-ին՝

$$Q_{ֆ.կ.} = \frac{109178 + 450840}{500840} = 1,11,$$

2022 թ.-ին՝

$$Q_{\text{ֆ.լ.}} = \frac{160810 + 1008210}{1117840} = 1,04:$$

Ֆինանսական կախվածության ցուցանիշներից նախընտրելի է 2022 թ.-ի ցուցանիշը, քանի որ մնացած տարիներին ձեռնարկության կախվածությունը վարկատուներից ավելի շատ է եղել, քան 2022 թ.-ին:

Ֆինանսական լծակի գործակիցը ($Q_{\text{ֆ.լ.}}$) ցույց է տալիս ֆինանսավորման փոխառու և սեփական աղբյուրների հարաբերակցությունը՝

$$Q_{\text{ֆ.լ.}} = \frac{\text{Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Կապիտալ և պահուստներ}}:$$

2020 թ.-ին ֆինանսական լծակի գործակիցը կազմել է՝

$$Q_{\text{ֆ.լ.}} = \frac{92632 + 564000}{756500} = 0,86,$$

2021 թ.-ին՝

$$Q_{\text{ֆ.լ.}} = \frac{109178 + 450840}{651092} = 0,8,$$

2022 թ.-ին՝

$$Q_{\text{ֆ.լ.}} = \frac{160810 + 1008210}{1655600} = 0,7:$$

Ֆինանսական լծակը ցույց է տալիս ֆինանսավորման փոխառու և սեփական աղբյուրների հարաբերակցությունը: Ընկերություն տեսանկյունից նախընտրելի է ֆինանսական լծակի բարձր արժեքը, ինչը բարձրացնում է ներդրումների շահութաբերությունը:

Այս երեք տարիներից նախընտրելի է 2022 թ.-ի ցուցանիշը, քանի որ ընկերությունը 2022 թ.-ին չի մեծացրել իր պարտքը՝ ի տարբերություն 2020 և 2021 թ.թ.-երի:

Ընթացիկ ակտիվների ծածկման գործակիցը ($Q_{\text{ը.ա.ծ.}}$) ցույց է տալիս ֆինանսավորման երկարաժամկետ աղբյուրներով ձեռնարկության ընթացիկ ակտիվների ծածկման աստիճանը՝

$$Q_{\text{ը.ա.ծ.}} = \frac{\text{Կապիտալ և պահուստներ} + \text{երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}}:$$

2020-ին ընթացիկ ակտիվների ծածկման գործակիցը կազմել է՝

$$Q_{\text{ը.ա.ծ}} = \frac{756500 + 564000}{1112441} = 1,19,$$

2021 թ.-ին՝

$$Q_{\text{ը.ա.ծ}} = \frac{651092 + 450840}{1374316} = 0,80,$$

2022 թ.-ին՝

$$Q_{\text{ը.ա.ծ}} = \frac{1655600 + 1008210}{3805450} = 0,7:$$

Ընթացիկ ակտիվների ծածկման գործակիցն արտահայտում է կազմակերպության վճարունակությունը՝ հաշվի առնելով ինչպես դեբիտորական պարտքերի և իրացումից հասույթի ժամանակին ստացման, այնպես էլ, անհրաժեշտության դեպքում, շրջանառու միջոցների այլ տարրերի իրացման դեպքերը, բոլոր ընթացիկ ակտիվների մեկ պտույտի միջին տևողությունը համապատասխան ժամանակաշրջանում:

Որքան ցածր է այս գործակցի մակարդակը, այնքան լավ է կազմակերպության դիրքը, քանի որ որքան մեծ լինեն ընթացիկ ակտիվները ընթացիկ պարտավորություններից, այնքան կազմակերպությունը պաշտպանված կլինի:

Ներդրումային գրավչության ամենակարևոր կողմերից է ֆինանսական գրավչությունը, որ մեծապես պայմանավորված է ձեռնարկության ֆինանսական կայունությամբ: «Սվիտ-Տեքս» ՍՊԸ 2020-2022 թ.թ. ֆինանսական գործունեության ցուցանիշների կատարած վերլուծության արդյուքները վկայում են ձեռնարկության ֆինանսական կայունության, հետևաբար՝ նաև ֆինանսական և ներդրումային գրավչության մասին՝ դրսևորելով աճի միտում, իսկ ֆինանսական կայունության ցուցանիշները գտնվել են նորմալ սահմանափակումների միջակայքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Крейнина М.И.** Финансовое состояние предприятия: методы оценки.- М.: ИКУ «ДИС», 1997.- 362 с.
2. **Հարությունյան Թ.Հ.** Ներդրումներ և ներդրումային գործունեություն: Ուս. Ձեռնարկ. - Եր.: ՀԱԱՀ, 2021. - 188 էջ:
3. **Մաթևոսյան Ա.** Կազմակերպությունների իրացվելիության վճարունակության և ֆինանսական կայունության գնահատում.- Երևան, 2015.- 100 էջ:
4. **Բայադյան Ա.** Ձեռնարկության ֆինանսական դրության գնահատում.- Երևան, 2006.- 292 էջ:

Լ.Տ. ՏԱՐԳՏՅԱՆ

**АНАЛИЗ ФИНАНСОВОЙ СТАБИЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЯ НА
ПРИМЕРЕ ООО «СВЕТ-ТЕКС»**

Инвестиционная привлекательность – один из наиболее значимых аспектов, интересующих как организацию, так и экономику страны в целом. Результатом проведенного исследования стал вывод о том, что центральным звеном инвестиционной привлекательности предприятия является ее финансовое положение и финансовая стабильность, поэтому наиболее часто применимым методом их оценки является расчет финансовых показателей.

Ключевые слова: финансовая привлекательность, финансовая стабильность, ликвидность, платежеспособность, финансовая зависимость, финансовая автономность, финансовый рычаг.

L.S. SARGSYAN

**ANALYSIS OF FINANCIAL STABILITY OF AN ENTERPRISE ON THE
EXAMPLE OF «SVET-TEX» LLC**

Investment attractiveness is one of the most significant aspects that interest both the organization and the economy of the country as a whole. The result of the study is the conclusion that the central point of the investment attractiveness of the corporation is its financial attractiveness and financial stability, so the most commonly used method for its evaluation is the calculation of financial indicators.

Keywords: financial attractiveness, financial stability, liquidity, solvency, financial dependence, financial autonomy, financial leverage.

ՀՏԴ 330.1

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.Ռ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, Ն.Կ. ՄԱՆԱՍՅԱՆ

**ՇՐՋԱՆԱԶԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱԶ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
(Գյումրի)**

Շրջանաձև տնտեսությունը հանդիսանում է կանաչ տեխնոլոգիաների ներդրման կարևորագույն գործիք, որն ուղղված է ռեսուրսների բազմակի օգտագործմանը և թափոնների կրճատմանը: Որպես փակ համակարգ՝ շրջանաձև տնտեսությունը կիրառում է վերամշակման սկզբունքը՝ օպտիմալացնելով բնական ռեսուրսների օգտագործումը: Կանաչ տեխնոլոգիաների ներդրումը նպաստում է ոչ միայն էկոհամակարգերի պահպանմանը, այլև նոր աշխատատեղերի ստեղծմանը և կյանքի որակի բարելավմանը: Աշխատանքում